



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք

ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՄԱՐՏԻ 2023 թվականի N 13-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ
ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ **Փարաքար համայնքի
ավագանին որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի
ավագանու 2023 թվականի մարտի 2-ի արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն
հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -11

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՂԵԿՅԱՆ ՌՈՒԲԵԻԿ

ԱԽՏՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԱՎԱԳՅԱՆ ԼԻԼԻԹ

ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ ԼՅՈՒԴՎԻԳ

ԵՐԻՑՅԱՆ ԷՄԻՆ

ԻՍԴԻՐՅԱՆ ՄԱՐԻԱՄ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԻՆԱՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԿՐՏՉՅԱՆ ԿԱՐԵՆ

ՍԱՐԴԱՐՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ





Հավելված
Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու
2023 թվականի մարտի 2-ի N13-Ա որոշման

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին

Զեկ.՝ Ք.Մելքոնյան

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի 2022 թվականի բյուջեի կատարման հաստատման մասին

Զեկ.՝ Ք.Մելքոնյան

3. Սարգիս Խաչիկի Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

Զեկ.՝ Հ.Միքայելյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՄԱՐՏԻ 2023 թվականի N 14 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ
2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 90-րդ հոդվածի 1-ին մասով, «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասով, 33-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2023 թվականի փետրվարի 21-ի թիվ 06/27.0.01/8506-23 պետական փորձագիտական եզրակացությունը . **Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի 2023 թվականի բյուջեն՝ համաձայն NN 1-10-րդ հավելվածների :
2. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի 2023 թվականի բյուջեի պահուստային ֆոնդի միջոցներից համայնքի բյուջեում չնախատեսված ծախսերի կամ նախատեսված ծախսերի լրացուցիչ ֆինանսավորում իրականացնելուն:
3. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի 2023 թվականի բյուջեի կատարման ընթացքում համայնքի ղեկավարի կողմից գործառնական և տնտեսագիտական դասակարգման մեջ վերաբաշխումներ կատարելուն:
4. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի 2023 թվականի բյուջեի ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման փոփոխություններ կատարելու համար 50 տոկոսի չափաքանակով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11

Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՂԵԿՅԱՆ ՌՈՒԲԵԿ

ԱԽՏՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԱՎԱԳՅԱՆ ԼԻԼԻԹ

ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ ԼՅՈՒԴՎԻԳ

ԵՐԻՑՅԱՆ ԷՄԻՆ

ԻՍԴԻՐՅԱՆ ՄԱՐԻԱՄ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԻՆԱՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԿՐՏՁՅԱՆ ԿԱՐԵՆ

ՍԱՐԴԱՐՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՎԱՎԱՐ

ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՄԱՐՏԻ 2023 թվականի N 15 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, « Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասով. **Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի 2022 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշմն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -11

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՂԵԿՅԱՆ ՌՈՒԲԵԿ

ԱԽՏՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԱՎԱԳՅԱՆ ԼԻԼԻԹ

ԳՅՈՒԼԼԱԶԱՐՅԱՆ ԼՅՈՒԴՎԻԳ

ԵՐԻՅՅԱՆ ԷՄԻՆ

ԻՍԴԻՐՅԱՆ ՄԱՐԻԱՄ

ԽԱԶԱՏՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԻՆԱՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԿՐՏՅԱՆ ԿԱՐԵՆ

ՍԱՐԴԱՐՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՄԱՐՏԻ 2023 թվականի N 16 -Ա

ՍԱՐԳԻՍ ԽԱԶԻԿԻ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ
ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 9-րդ մասով, հիմք ընդունելով Սարգիս Խաչիկի Ղազարյանի 2023 թվականի փետրվարի 9-ի N 429 դիմումը և Փարաքար համայնքի ղեկավարի կողմից 2023 թվականի փետրվարի 21-ին տրված N 33 ճարտարապետահատակագծային առաջադրանքի նախագիծը.
Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով գյուղում գտնվող, Սարգիս Խաչիկի Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող, 04-094-0562-0031 կադաստրային ծածկագրով 0,1622 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության / հողատեսքը՝ 0.1622 հա հողամասից՝ 0.0762 հա հանդիսանում է խաղող, 0.086 հա վարելահող/ հողամասի նշանակությունը փոփոխել՝ որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ հետագայում տնտեսական շինություն և սնկանոց կառուցելու համար:

2. Հանձնարարել համայնքի ղեկավարին՝ կատարելու սույն որոշումից բխող գործառույթները:

Կողմ -11

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՂԵԿՅԱՆ ՌՈՒԲԵԿ

ԱԽՏՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԱՎԱԳՅԱՆ ԼԻԼԻԹ

ԳՅՈՒԼԼԱԶԱՐՅԱՆ ԼՅՈՒԴԿԻԳ

ԵՐԻՅՅԱՆ ԷՄԻՆ

ԻՍՊԻՐՅԱՆ ՄԱՐԻԱՄ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԻՆԱՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԿՐՏՅԱՆ ԿԱՐԵՆ

ՍԱՐԴԱՐՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵՎԱՎԱՐ՝

ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Փարաքար համայնքի 2023 թվականի
ավագանու մարտի 2-ի նիստի N ____-Ն
որոշման

Տեղեկություններ գույքահարկի և հողի հարկի, հողերի և այլ գույքի
վարձակալության վարձավճարների գծով առանձին ցուցանիշների վերաբերյալ

(հազար դրամով)

N	Եկամտատեսակները	ապառքը տարեսկզբի դրությամբ 01.01.2022թ. .	ապառքը տարեվերջի դրությամբ 30.12.2022թ. .	տվյալ տարվա հաշվարկային գումարը
Ա	1	2	3	4
1	Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար	78106.6		0.0
2	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողերի համար	73609.1		0.0
3	Անշարժ գույքի հարկ	94241.0	79578.7	128903.0
4	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	115954.0	264685.1	206100.0
5	Հողերի վարձակալության վարձավճարներ		--	x
6	Այլ գույքի վարձակալության վարձավճարներ	--	--	x

Կ.Տ. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝

Դ.ՄԻՆԱՍՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Փարաքար համայնքի 2023 թվականի ավագանու մարտի
2-ի նիստի N 14-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ
ԵԿԱՄՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆԸ

հազ.դրամ

Եկամուտների անվանումները		2021թ. Փաստացի	2022թ. Հաստատված	2023թ. Կանխատեսվող
1	Հողի հարկ	15653.100	11700.00	22800.00
2	Գույքահարկ /շինությունից/	72274.00	27300.00	20000.00
3	Անշարժ գույքի հարկ		96600.00	133000.00
4	Գույքահարկ /փոխադրամիջոցից/	175298.30	178010.00	243000.00
5	Տեղական տուրքեր	23029.40	25190.00	31889.51
6	Այլ եկամուտներ	89374.68	132359.73	80910.000
7	Վարձակալված հողի և գույքի վճար	11738.40	13500.00	13307.00
8	Տեղական վճար	56153.90	86190.22	128280.00
9	ՀՀ Պետ բյուջեից դոտացիա	509601.30	501027.795	538802.192
10	Ազգային նվաճարանների և նվազագ.աշխատավարձի գծով	5122.25	5122.25	5011.30
	Ընդամենը վարչական բյուջե	958245.331	1077000.00	1217000.00
11	Հողի օտարումից եկամուտ	501716.24	346357.254	85867.580
12	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	165519.30	57196.782	234386.959
13	Ֆոնդային բյուջեի ազատ մնացորդ	408923.26	576642.747	242745.4590
	Ընդամենը ֆոնդային բյուջե	1127701.29	980196.78	563000.00
	Ընդամենը վարչական և ֆոնդային բյուջե	2085946.625	2057196.782	1780000.000

Հայաստանի
Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար
համայնքի 2023 թվականի ավագանու մարտի 2-
ի նիստի N14 -Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՍՏԱՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՍՏԱՆՔԻ ԸՍՏ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

հազ.դրամ

Ծախսերի բնագավառները		2021թ. Փաստացի	2022թ. Հաստատված	2023թ. Կանխատեսվող
1	Համայնքապետարան	279,566.43	450,000.00	438,480.00
2	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	20,188.78	31,900.00	79,853.85
4	Գյուղատնտեսություն	4,498.49	0.00	
6	Տրանսպորտ	3,686.77	0.00	
8	Աղբահանում	82,687.46	148,600.00	145,000.00
9	Կեղտաջրերի հեռացում	4,288.10	13,400.00	19,390.00
10	Փողոցների լուսավորություն	4,716.63	15,000.00	25,000.00
13	Առողջապահություն	100.00	0.00	
15	Հանգիստ մշակույթ և կրոն	50,464.42	64,500.00	45,000.00
17	Հանգստի և սպորտի ծառայություններ			20,000.00
16	Նախադպրոցական կրթություն	196,275.24	230,000.00	277,000.00
	Փարաքար-Թաիրով		72,000.00	74,000.00
	Մերձական		38,500.00	43,000.00
	Մուսալեռ		20,000.00	27,000.00
	Նորակերտ		35,000.00	43,000.00
	Պտղունք		21,500.00	26,000.00
	Այգեկ		23,000.00	32,000.00
	Բաղրամյան		20,000.00	32,000.00
17	Միջնակարգ ընդհանուր կրթություն		0.00	
18	Արվեստի դպրոց	44,844.75	44,477.75	66,988.70
	Ազգային նվազ.փոխհատուց	5,122.25	5,122.25	5,011.30
19	Սոց օգնություն	26,687.84	20,000.00	16,000.00
20	Պահուստային ֆոնդ (վարչ.բյուրո)	49,605.00	54,000.00	79,276.15
	Ընդամենը վարչական բյուրո	772,732.13	1,077,000.00	1,217,000.00

21	Շենքեր և շինությունների կառուցում	638,672.40	761,379.31	412,000.00
22	Շենքեր և շինությունների կապիտալ վերանորոգում	0.00	155,817.47	110,000.00
23	Վարչական սարքավորումներ	42,615.60	13,000.00	20,000.00
24	Նախագծահետազոտական ծախսեր	0.00	50,000.00	21,000.00
	Ընդամենը ֆոնդային բյուջե	681,288.00	980,196.78	563,000.00
	Ընդամենը	#####	2,057,196.78	1,780,000.00

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Փարաքար համայնքի 2023 թվականի
ավագանու մարտի 2-ի նիստի N 14 -Ն
որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ
ՀԱՄԱՅՆՔԱԿԱՆԸ ԸՍՏ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

հազ.դրամ

ԾԱԽՍԵՐ		2021թ. փաստացի	2022թ. Հաստատված	2023թ. Կանխատեսվող
4111	Աշխատավարձ	252,330.9	343,400.0	344,000.0
4112	Պարգևատրում	26,816.6	92,000.0	88,000.0
4115	Այլ վարձատրություններ	2,155.3	25,000.0	25,700.0
4211	Գործառնական և բանկային ծառայություն	0.0	990.0	2,000.0
4212	Էներգետիկ ծառայություններ	18,872.3	30,000.0	37,000.0
4213	Կոմունալ ծառայություններ	39,212.4	79,990.0	79,000.0
4214	Կապի ծառայություններ	2,048.3	2,000.0	3,000.0
4215	Ապահովագրական ծախսեր	6,141.4	990.0	980.0
4216	Գույքի և սարքավորումների վարձակալություն	0.0	990.0	300.0
4221	Ներքին գործուղում	754.2	2,000.0	2,000.0
4222	Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	0.0	5,000.0	5,000.0
4231	Վարչական ծառայություններ	10.0	300.0	300.0
4232	Համակարգչային ծառայություններ	1,768.1	2,000.0	4,000.0
4233	Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ	35.0	3,000.0	2,000.0
4234	Տեղեկատվական ծառայություններ	1,118.1	2,000.0	2,000.0
4235	Կառավարչական ծառայություններ	720.0	3,000.0	4,000.0
4236	Կենցաղային և հանրային սննդի ծառայություններ	1,235.0	2,000.0	3,000.0
4237	Ներկայացուցչական ծախսեր	10,420.2	6,000.0	6,000.0
4239	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	6,332.7	5,000.0	6,000.0
4241	Մասնագիտական ծառայություններ	9,761.1	6,980.0	6,990.0

4251	Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	8,290.0	5,000.0	10,000.0
4252	Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	2,281.9	5,500.0	5,700.0
4261	Գրասենյակային նյութեր և հագուստ	3,480.1	3,100.0	4,000.0
4264	Տրանսպորտային նյութեր	7,491.6	11,820.0	11,800.0
4267	Կենցաղային և հանրային սննդի նյութեր	484.8	3,000.0	4,000.0
4269	Հատուկ նպատակային այլ նյութեր	10,458.4	12,840.0	29,000.0
4511	Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական /համայնքային/ կազմակերպություններին	276,121.7	338,977.8	408,988.7
4637	Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպ.	6,295.7	6,822.3	5,011.3
4657	Այլ կապիտալ դրամաշնորհներ	0.0	0.0	16,853.9
4729	Այլ նպաստներ բյուջեից	26,687.8	20,000.0	16,000.0
4819	Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	790.8	1,200.0	2,000.0
4823	Պարտադիր վճարներ	912.7	2,100.0	3,100.0
4891	Պահուստային ֆոնդ	49,605.0	54,000.0	79,276.2
	Ընդամենը վարչական բյուջե	772,732.1	1,077,000.0	1,217,000.0
5112	Շենքերի և շինությունների կառուցում	638,672.4	761,379.3	412,000.0
5113	Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում		155,817.5	110,000.0
5122	Վարչական սարքավորումներ	42,615.6	13,000.0	20,000.0
5134	Նախագծահետազոտական ծախսեր		50,000.0	21,000.0
	Ընդամենը	#####	2,057,196.8	1,780,000.0

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՒ Ղ Ե Ր Զ Ը
Հ Ա Ս Ա Յ Ե Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն ՈՒ Ն

Փարաքար համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին

ՀԱՐԳԵԼԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ.

Բյուջեն տեղական ինքնակառավարման մարմիններին (ՏԻՄ-երին) Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների ձևավորման և ծախսման որոշակի ժամանակահատվածի ֆինանսական ծրագիր է, բյուջեն ակնկալվող եկամուտների և առաջարկվող ծախսերի համապարփակ թվարկումն է՝ տվյալ բյուջետային տարվա ընթացքում կառավարման մարմինների յուրաքանչյուր գործառնության գծով:

Համայնքի ֆինանսական միջոցները խիստ սահմանափակ են՝ դրանց բաշխումը պետք է իրականացվի բացառապես ՏԻՄ-երին վերապահված լիազորությունների սահմաններում: Ըստ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի, համայնքի բյուջեն եկամուտների (մուտքերի) ձևավորման և ծախսման մեկ տարվա ֆինանսական ծրագիրն է, որը նպատակաուղղվում է համայնքի զարգացման ծրագրերի և տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենքով վերապահված լիազորությունների իրականացմանը: Բյուջեն ցանկացած համայնքի ֆինանսական ամենախիմնական փաստաթուղթն է, որտեղ ներկայացված են համայնքի քաղաքականությունը, տարեկան գործունեության պլանավորումը և հսկողությունը: Այն ներառում է տվյալ տարվա համար պլանավորվող ծրագրերը, միջոցառումները, եկամուտների կանխատեսումները և այն ծախսերի նախահաշիվները, որոնք անհրաժեշտ են պլանավորվող ծրագրերն ու միջոցառումները ֆինանսավորելու համար:

Համայնքի 2023 թվականի բյուջեի նախագիծը կազմելիս կատարվել են համեմատական վերլուծություններ՝ Փարաքար համայնքի ինը բնակավայրերի 2021 թվականի փաստացի արդյունքների, 2022 թվականի հաստատված և 2023 թվականի կանխատեսվող ցուցանիշների հետ: Այդ ցուցանիշների համեմատական վերլուծությունն ունի հետևյալ տեսքը.

	Եկամուտները /հազ.դրամ/	Ծախսերը /հազ.դրամ/	Բյուջեի հավելուրդ կամ դեֆիցիտ
2021թ. փաստացի	2085946.625	1454020.133	0
2022 թ. հաստատված	2057196.782	1814451.323	0
2023թ. կանխատեսվող	1.780.000.000	1.780.000.000	242.745.459

Համայնքի 2023 թվականի բյուջեն մշակվել է՝ հիմք ունենալով 2022 թվականի ընթացքում Փարաքար համայնքի ներկայացրած կապիտալ շինարարության բնագավառում համայնքի կազմում ներառված բնակավայրերում սուբվենցիոն ծրագրերի կատարումը:

Համայնքի գործունեությունը մեծապես կախված է բյուջետային գործընթացի մասնագիտական կազմակերպումից, բյուջեի եկամուտների արդյունավետ հավաքագրումից և միջոցների խնայողական օգտագործումից:

Գալիք բյուջետային տարվա համայնքի զարգացման հիմնական ուղղություններն են՝

- ✓ Բարելավել համայնքի ֆինանսական վիճակը՝ ճշտելով հողի հարկի և գույքահարկի բազաները և բարձրացնելով սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը:
- ✓ Բարձրացնել բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների մակարդակը և որակը:
- ✓ Իրականացնել կրթության, մշակույթի և սպորտի բնագավառների համայնքային ենթակառուցվածքների պահպանման, շահագործման, նորոգման, ջեռուցման արեգակնային համակարգերի տեղադրման, գույքային վերագինման և այլ աշխատանքներ:
- ✓ Կապիտալ ներդրումներ կատարել համայնքի բարեկարգման և ճանապարհային տնտեսության բնագավառներում:
- ✓ Աշխուժացնել համայնքի մշակութային, մարզական և հասարակական կյանքը:
- ✓ Իրականացնել սոցիալական տարաբնույթ ծրագրեր:

Համայնքի 2023թ. զարգացման հիմնական ուղղությունները ուղղված են բնակչության կենսական շահերի ապահովմանը, շրջակա միջավայրի պահպանմանը, համայնքի հարմարավետ ու բարեկեցիկ միջավայրի ստեղծմանը, համայնքային ենթակառուցվածքների արդիականացմանն ու

գարգացմանը, ինպես նաև համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան քաղաքաշինական ծրագրերի իրականացմանը:

Շահագրգիռ մոտեցում պետք է ցուցաբերեն համայնքի բնակչությունը, բնակավայրերի ղեկավարները, համայնքի ավագանին, համայնքային կազմակերպությունների աշխատակիցները՝ համայնքի 2023 թվականի բյուջեի միջոցների գոյացման, դրանց նպատակային օգտագործման, բյուջեի կատարման և վերահսկման ուղղությամբ:

Բյուջեի նախագիծը կազմելիս օգտագործվել են Կառավարության կողմից սահմանված խորհրդատվական բնույթի նորմատիվները:

Համայնքի բյուջեն կազմելիս հաշվի է առնվել թվով չորս սուբվենցիոն ծրագրերը որոնց մի մասը սկսվել են 2022թվականին և նախատեսվում է ավարտել 2023թվականի ընթացքում.

1. Փարաքար համայնքի Բաղրամյան բնակավայրի Կոմիտաս փողոցի մի հատվածի, Ա.Իսահակյան փողոցի մի հատվածի, Այգեկ բնակավայրի երևանյան խճուղին և Փարաքար բնակավայրի Արարատյան, Ֆրրիկի, Ավետիք Իսահակյան փողոցների ասֆալտապատում ծրագրի մասով 2022թվականի ընթացքում ավարտին է հասցվել Փարաքար համայնքի Բաղրամյան բնակավայրի Կոմիտաս փողոցի մի հատվածի, Ա.Իսահակյան փողոցի մի հատվածի, Այգեկ բնակավայրի երևանյան խճուղին, Փարաքար բնակավայրի Եղիշե Չարենց փողոցի, Ֆրրիկի, Ավետիք Իսահակյան և Հուշարձանի փողոցների ասֆալտապատումը: 2023թվականին նախատեսվում է ավարտին հասցնել Փարաքար բնակավայրի Արարատյան փողոցի ասֆալտապատումը - ընդհանուր թվով **45604.981** հազ. դրամ , որից համայնքի մասնաբաժինը **1433.237** հազ. դրամ , կառավարության մասնաբաժինը **44171.744** հազ. դրամ գումար:
2. 2022թվականին մեկնարկվեց Փարաքար համայնքի Բաղրամյան բնակավայրի Կոմիտաս փողոցի մի հատվածի և Փարաքար բնակավայրի Սևանի փողոցի տուֆով սալարկման ծրագիրը, որի կատարման մի մասը տեղափոխվեց 2023թվական և նախատեսվում է ավարտին հասցնել 2023թվականին , ընդհանուր թվով **145892.826** հազ դրամ գումար , որից համայնքի մասնաբաժնով **73327.657** հազ.դրամ, կառավարության մասնաբաժինը **72565.169** հազ.դրամ գումար:
3. Փարաքար համայնքի Բաղրամյան բնակավայրի Այգեգործների փողոցի, Թումանյան փողոցի և Շիրազի փողոցի, Պտղունք բնակավայրի Ագաթանգեղոս փողոցի, Սուսայեռ բնակավայրի Տիգրան Մեծ փողոցի, Մերձավան բնակավայրի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ փողոցների և Այգեկ բնակավայրի 2-րդ և 3-րդ փողոցների, Փարաքար բնակավայրի Արցախի թաղամասի և Սիեր Սկրոչյան փողոցի գազաֆիկացման ծրագրի մասով 2022թվականի ընթացքում ավարտին է հասցվել Փարաքար բնակավայրի Արցախ թաղամասի և Պտղունք բնակավայրի Ագաթանգեղոս փողոցի գազաֆիկացման աշխատանքները, 2023թվականին նախատեսվում է ավարտել ծրագրի մնացած գյուղերի մասով անավարտ աշխատանքները՝ Բաղրամյան գյուղի Այգեգործների, Թումանյան և Շիրազ փողոցների, Սուսայեռ գյուղի Տիգրան Մեծ փողոցի , Մերձավան գյուղի 1-ին, 2-րդ , 3-րդ և 4-րդ փողոցների , Այգեկ բնակավայրի 2-րդ և 3-րդ փողոցների , Փարաքար գյուղի Սիեր Սկրոչյան փողոցի գազաֆիկացման աշխատանքները, ընդհանուր թվով **89774.162** հազ. դրամ ,որից համայնքի մասնաբաժնով **19432.137** հազ. դրամ, կառավարության մասնաբաժնով **70342.025** հազ. դրամ գումար:
4. Փարաքար համայնքի Բաղրամյան, Այգեկ, Լորակերտ, Արևաշատ, Սուսայեռ, Մերձավան, Պտղունք, Փարաքար բնակավայրերում խաղահրապարակների կառուցում և գոյություն ունեցող խաղահրապարակների վերանորոգում և վերագինում ծրագրի մասով 2022 թվականին ավարտվել է Լորակերտ գյուղի խաղահրապարակի կառուցման աշխատանքները և Փարաքար համայնքի Փարաքար, Պտղունք, Սուսայեռ բնակավայրերի խաղահրապարակների կառուցման աշխատանքների մի մասը , ընդհանուր թվով **125321.206** հազ. դրամ գումար, որից համայնքի մասնաբաժնով **78013.185** հազ. դրամ , կառավարության մասնաբաժնով **47308.021** հազ. դրամ գումար:

2023թվականի ընթացքում նախատեսվել է սուբվենցիոն ծրագրեր, որոնք կիրականացվեն համայնքի համար առավել առաջնահերթության սկզբունքով .

1. Փարաքար համայնքի Այգեկի, Փարաքարի, Թաիրովի, Արևաշատի, Մերձավանի, Պտղունքի, Սուսայեռի, Լորակերտի մանկապարտեզների վերանորոգում և բակային տարածքների բարեկարգում, Արևաշատ բնակավայրում մանկապարտեզի կոյուղու հորի կառուցում և տարածքի բարեկարգում
2. Փարաքար համայնքի Փարաքար բնակավայրի Է.Թևոսյան փողոցի տուֆով սալարկում
3. Փարաքար համայնքի Փարաքար բնակավայրի Է.Թևոսյան և Բաֆֆու փողոցների կոյուղագծի կառուցում

Նախագծում նախատեսված է նաև պահուստային ֆոնդ, որը տարվա ընթացքում ի հայտ եկած չկանխատեսված ծախսերի ֆինանսավորման աղբյուր է:

Հայաստանի հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի համաձայն համայնքի 2023 թվականի բյուջեն բաղկացած է 2 բաղկացուցիչ մասերից՝

Համայնքի բյուջեի վարչական մաս /վարչական բյուջե/

Համայնքի բյուջեի ֆոնդային մաս /ֆոնդային բյուջե/

Բյուջեի այդ բաղկացուցիչ մասերը հավասարակշռված են:

Բյուջեի եկամուտների /ծախսերի/ կանխատեսման և դրանց նախահաշիվների կազմման աշխատանքներն իրականացվում են ինչպես վարչական բյուջեի, այնպես էլ ֆոնդային բյուջեի համար առանձին:

- Բյուջեի եկամտային մասում ընդամենը նախատեսվել են հարկեր և տուրքեր **450689.510** հազ. դրամի չափով:
 - Այլ եկամուտների գծով նախատեսվում է տարվա ընթացքում հավաքագրել՝ **222497.0** հազ.դրամ:
 - Նախագծում ներառվել է նաև ՀՀ Կառավարության կողմից Փարաքար համայնքին համահարթեցման սկզբունքով 2023 թվականի համար հատկացված **538802.192** հազ. դրամի չափով դոտացիա:
 - Պետության կողմից տրամադրվում է նպատակային հատկացումներ (սուբվենցիա)՝ համայնքի արվեստի դպրոցում ազգային նվագարաններով սովորողների ուսման վարձի հատուցման նպատակով **5011.3** հազ.դրամ:
 - Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի օտարումից եկամուտներ **85867.58** հազ. դրամ:
- Ընդամենը նախատեսվում է 2023 թվականի ընթացքում եկամուտ- **1217000.0** հազ.դրամի չափով:

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի պահանջներով Փարաքար համայնքի ավագանուն հաստատմանն ենք առաջարկում

1. Փարաքար համայնքի 2023թվականի բյուջեն՝
- ա/ վարչական բյուջեի եկամտային մասով- **1217000.0** հազ.դրամ
 - բ/ վարչական բյուջեի ծախսային մասով- **1217000.0** հազ.դրամ
 - գ/ վարչական բյուջեի դեֆիցիտ - 0 դրամ
 - դ/ ֆոնդային բյուջեի եկամտային մասով - **85867.58** հազ.դրամ
 - ե/ ֆոնդային բյուջեի ծախսային մասով - **85867.58** հազ.դրամ
 - զ/ ֆոնդային բյուջեի հավելուրդ - **242745.459** հազ.դրամ

Վարչական և ֆոնդային բյուջեներում եկամուտները սահմանել հետևյալ չափերով.

Եկամուտների անվանումները		2023թ. Կանխատեսվող
1	Հողի հարկ	22800.0
2	Գույքահարկ /շինությունից/	20000.0
3	Անշարժ գույքի հարկ	133000.0
4	Գույքահարկ /փոխադրամիջոցից/	243000.0
5	Տեղական տուրքեր	31889.51
6	Այլ եկամուտներ	80910.0
7	Վարձակալված հողի և գույքի վճար	13307.00
8	Տեղական վճար	128280.0
9	ՀՀ Պետ բյուջեից դոտացիա	538802.192
10	Ազգային նվագարանների և նվագադ.աշխատավարձի գծով	5011.30
Ընդամենը վարչական բյուջե		1217000.00
11	Հողի օտարումից եկամուտ	85867.580
12	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	234386.959
14	Ֆոնդային բյուջեի ազատ մնացորդ	242745.4590
Ընդամենը ֆոնդային բյուջե		563000.00

	Ընդամենը վարչական և ֆոնդային բյուջե	1780000.00
--	-------------------------------------	------------

Վարչական և ֆոնդային բյուջեի ծախսերն ըստ բնագավատների սահմանել հետևյալ չափերով.
հազ.դրամ

Ծախսերի բնագավատները		2023թ. Կանխատեսվող
1	Համայնքապետարան	438480.0
2	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	79853.85
3	Աղբահանում	145000.0
4	Կեղտաջրերի հեռացում	19390.00
5	Փողոցների լուսավորություն	25000.0
6	Հանգիստ մշակույթ և կրոն	45000.0
7	Հանգստի և սպորտի ծառայություններ	20000.0
8	Նախադպրոցական կրթություն	277000.0
9	Արվեստի դպրոց Ազգային նվագ.փոխհատուց	66988.70 5011.30
10	Սոց օգնություն	16000.00
11	Պահուստային ֆոնդ (վարչ.բյուջե)	79276.15
	Ընդամենը վարչական բյուջե	1217000.0
12	Ծենքեր և շինությունների կառուցում	412000.0
13	Ծենքեր և շինությունների կապիտալ վերանորոգում	110000.0
14	Վարչական սարքավորումներ	20000.0
15	Նախագծահետազոտական ծախսեր	21000.0
	Ընդամենը ֆոնդային բյուջե	563000.0
	Ընդամենը	1780000.0

- Համաձայնություն տալ Փարաքար համայնքի 2023 թվականի բյուջեի պահուստային ֆոնդի միջոցներից համայնքի բյուջեում չնախատեսված ծախսերի կամ նախատեսված ծախսերի լրացուցիչ ֆինանսավորում իրականացնելուն:
- Համաձայնություն տալ Փարաքար համայնքի 2023 թվականի բյուջեի կատարման ընթացքում համայնքի ղեկավարի կողմից գործառնական և տնտեսագիտական դասակարգման մեջ վերաբաշխումներ կատարելուն:
- Փարաքար համայնքի 2023 թվականի բյուջեի ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման մեջ փոփոխություններ կատարելու համար սահմանել 50% չափաքանակ :

Նորմատիվ իրավական ակտերում փոփոխություն կամ լրացում կարող է կատարվել միայն նույն տեսակի և բնույթի նորմատիվ իրավական ակտով:

ԿԱՏԱՐՈՂՈՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ
ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ

1. Փարաքար համայնքի 2022թ. տարվա ընթացքում
հավաքագրված եկամուտների վերաբերյալ հաշվետվությունը

2022 թվականին վարչական բյուջեն ընդամենը հավաքագրվել է 1 միլիարդ 21 մլն 924.600 դրամ գումար, որը կազմում է բյուջեի 94.9 %-ը, 570 մլն 850.000 դրամ սեփական եկամուտի փոխարեն փաստացի հավաքագրվել է 515 մլն 581.686 դրամ , որը կազմում է 90.3%-ը:

N	Եկամուտների անվանումը		2022թ. տարեկան բյուջե	Հաշվետու ժամանակաշրջան /1-ին եռամսյակ, 1-ին կիսամյակ, 9 ամիս, տարի/		
				պլան	փաստացի	կատ %
				հազ. Դրամ		
I		Վարչական բյուջե ընդամենը	1077000.0	1077000.0	1021924.6	94.9
1		Ընդամենը հարկային եկամուտների	313560.0	313560.0	295758.29	94.3
	1.1	Հողի հարկ	11700.00	11700.00	15566.32	133.0
	1.2	Գույքահարկ շինություններից	27300.00	27300.00	11908.83	43.6
	1.3	Անշարժ գույքի հարկ	96550.00	96550.00	85437.71	88.5
	1.4	Գույքահարկ փոխադրամիջոցներից	178010.00	178010.00	182845.43	102.7
2		Ընդամենը տեղական տուրքեր այդ թվում	25190.00	25190.00	27900.71	110.8
	2.1	Համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) թույլտվության համար	3000.00	3000.00	6660.25	222.0
	2.2	Օբյեկտ-ը վերակառուցելու, ամրացնելու, տեսքը փոփոխ. աշխատանքներ	120.00	120.00	35.80	29.8
	2.3	Օբյեկտները քանդելու աշխատանքներ	120.00	120.00	24.90	20.8
	2.1	Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում` ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար	5000.00	5000.00	6535.66	130.7

	2.5	Բացօթյա վաճառք կազմակերպելու	1000.00	1000.00	315.90	31.6
	2.6	գազ և վառելիքաքսայուղային նյութեր	0.00	0.00		0.0
	2.7	Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի՝ առք ու վաճառք իրակ. թույլտվ. համար	460.00	460.00	50.00	10.9
	2.8	Ժամը 24-00 ից հետո աշխ. թույլտվության	3490.00	3490.00	2262.50	64.8
	2.9	Համայնքի վարչ. տարածքում, սահմանամերձ բարձրլեռն. համայնք-ի վարչ. տարածքում, բացառ. միջպետ. և հանրապետ. նշանակ. ավտոմոբիլ. ճանապարհ-ի կողեգրում, խանութ-ում և կրպակ-երում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկ. նավթ . գազ-ի վաճառքի թույլտվ. համար	2500.00	2500.00	1806.90	72.3
	2.1 0	Արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար (1ք.մ*1500)	9500.00	9500.00	10024.10	105.5
	2.1 1	Այլ տեղական տուրքեր	0.00	0.00	174.80	0.00
	2.1 2	Համայնքի վարչական տարածքում համայնքային կանոններին համապատասխան հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար	0.00	0.00	9.90	0.00
		3.Պաշտոնական դրամաշնորհ.	506150.00	506150.00	506342.955	100.0
		3.1 Պետ. բյուջեից դոտացիա	501027.8	501027.8	501027.8	100.0
		3.2 Ազգ. նվազարանների գծով սուբվենցիա	5122.250	5122.250	5315.155	103.77
3		Ոչ հարկային եկամուտներ	232100.00	232100.00	191922.69	80.06
	3.1	Օրենքով սահմանված այլ տեղական համայնքի սեփական համարվող վարձակալության վարձավճարներ	13500.00	13500.00	14758.62	109.3
	ա/	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետ. սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	0.00	0.00	13550.82	0.00
	բ/	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ	0.00	0.00	3.70	0.00
	գ/	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատ. իրավունքի դիմաց գանձվող վարձավճար	0.00	0.00	446.05	0.00

	դ/	այլ գույքի վարձակալության վճար	0.00	0.00	758.05	0.0
	3,2	Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից	0.00	0.00	102.70	0.00
		Վարչական գանձումներ	216800.00	216800.00	163812.25	75.6
	3,3	Ինքնակամ կառույցների օրինականացման վճար	99400.00	99400.00	70241.85	70.7
	3,4	Տեղական վճարներ	117400.00	117400.00	93570.40	79.7
	3,5	Վարչական իրավախախտումների պատժամիջոցներից եկամուտներ	1200.00	1200.00	500.00	41.7

		Ընդամենը վարչ. բյուջե	1077000.0	1077000.0	1021924.6	94.9
		Հողի օտարումից մուտքեր	255450.655	255450.655	52087.032	20.4
		Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	0	0	937.5	0
		Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	246714.682	246714.682	170227.244	69.0
		Ֆ/բ ազատ մնացորդ	633840.528	633840.528	633840.528	100,0
		Ընդամենը ֆոնդ. բյուջե	1136005.865	1136005.865	857092.304	73.1
		Ընդամենը	2213005.865	2213005.865	1879016.9	84.9
		Զուտ եկամուտ վարչ. բյուջե	570850.0	570850	515581.686	90.3
	3.6	Այլ ոչ հարկային եկամուտներ	600.00	600.00	12749.12	2124.9

2. Փարաքար համայնքի 2022թ.բյուջեի
ծախսերի կատարման հաշվետվությունն ըստ գործառնական
դասակարգման

2022 թվականի ընդամենը բյուջեով կատարվել է ծախսեր 1 միլիարդ 644 մլն 737.934 դրամ, որը կազմում է ընդամենը բյուջեի 74.3 %-ը: Վարչական մասով ծախսերը կատարվել են 868 մլն 170.199 դրամ գումարով- 80.6 %-ը: Ֆոնդային մասով 776 մլն 567.734 դրամ գումարով- 68.3 %

N		Ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի դասակարգման գործառական	2022թ. տարեկան բյուջե	Հաշվետու ժամանակաշրջան /1-ին եռամսյակ, 1-ին կիսամյակ, 9 ամիս, <u>տարի/</u>		
Խումբ	Ենթա-խումբ			այլան	փաստացի	կատ %
				հազ. դրամ		

I		Վարչական բյուջե ընդամենը	1077000.0	1077000.0	868170.200	80.6
1		Տեղական ինքնակառավարում	451845.824	451845.824	296285.851	65.6
2		Համայնքային այլ ծառայություն	57616.878	57616.878	45950.211	79.8
3		Առողջապահություն	0.0	0.000	0.0	0.0
4		Մշակույթի տներ, ակումբներ	17897.1	17897.100	17897.056	100.0
5		Սոցիալական ապահովություն	20000.000	20000.000	11836.400	59.2
		Հանգիստ, մշակույթ և կրոն	1600.000	1600.000	1043.000	65.2
6		Մշակութային ծառայություններ	41802.90	41802.900	41715.00	99.8
7		Հանգստի և սպորտի ծառայություններ	1200.00	1200.000	1200.000	100.0
8		Նախադպրոցական կրթություն	230000.00	230000.000	222625.00	96.8
9		Արտադպրոցական դաստիարակություն	51600.00	51600.000	51489.05	0.99
7		Բնակկոմունալ տնտեսություն	202358.877	202358.877	177051.743	87.5
	7.1	Ճանապարհների վերանորոգում	0	0.000	0.000	0.0
	7.2	Աղբահանում	168,746.150	168,746.150	155648.000	92.2
	7.3	Կեղտաջրերի հեռացում	8,400.000	8400.000	3993.000	47.5
	7.4	Կանաչապատում	0.000	0.000	0.000	0.0
	7.5	Արտաքին լուսավորում	25,212.727	25212.727	17410.743	69.1
8		Գյուղատնտեսություն	898.4	898.421	896.921	100.0
9		Լեռնահանքային արդյունաբերություն	0.0	0.000	0.0	0.0
10		Տրանսպորտ, ճան. տնտ. և կապ.	180.0	180.000	180.0	100.0
II		Ֆոնդային բյուջե	1136656.663	1136656.663	776567.734	69.3
	1	Ծենքերի և շինությունների շինարարություն	790035.326	790035.326	602947.092	76.3
	2	Ծենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	183621.337	183621.337	71420.780	38.9
	3	Վարչական սարքավորումների ձեռք բերման ծախսեր	12730.0	12730.0	2409.862	18.3
	4	Այլ ակտիվների ձեռք բերման ծախսեր	270.0	270	270,0	100,0
	5	Տրանսպորտային սարքավորումներ	0	0	0	0
	6	Նախագծահետազոտական ծախսեր	150000.000	150000,0	99520.0	66.4
I+II		Ընդամենը ծախսեր	2213656.663	2213656.663	1644737.934	74.3

**Փարաքար համայնքի 2022թ. ընթացքում կատարված
ծախսերի վերաբերյալ հաշվետվությունը**

Վարչական բյուջեից ընթացիկ ծախսեր է կատարվել ընդամենը 868 մլն 170.200 դրամ, որից՝ աշխատավարձ և այլ վարձատրություններ հոդվածով՝ 317 մլն 218.300 դրամ, այլ

վարձատրություններ հոգվածով 18 մլն 599.370 դրամ: Էներգետիկ ծառայություններ հոգվածով կատարվել է համայնքի 9 բնակավայրերի թվով 13 բաժանորդի էլ Էներգիայի ծախս 20 մլն 927.500 դրամի, բնական գազի ծախս 4մլն 74.890 դրամ: Կոմունալ ծառայություններ հոգվածով կատարվել է ծախս 74 մլն 111.200 դրամի , որից խմելու ջրի ծախս 701.657 դրամ, համայնքի կոյուղագծերի խցաբացման համար ծախս 3մլն 927.000 դրամ, Էքսկավատորի ծառայություն 7 մլն 659.600 դրամ, և համայնքի 9 բնակավայրերի աղբահանության ծառայության վճար Էքս Պրոֆի կազմակերպությանը 61մլն 823.000 դրամ:

Կապի ծառայություններ հոգվածով կատարվել է ծախս 1մլն 462.160 դրամի, որից` համայնքի 9 բնակավայրերի համայնքապետարանների ինտերնետ կապը ապահովելու համար Յուքոմ ՍՊԸ-ին 275.735 դրամ, Արփինետ ՍՊԸ-ին 697.000 դրամ, ՄՏՍ ՓԲԸ-ին 66.818 դրամ, հեռահաղորդակցության կապը ապահովելու համար Տելեկոմ Արմենիա ՓԲԸ ին 245.366 դրամ և փոստային ծառայություններից օգտվելու համար 177.240 դրամ:

Կատարվել են ապահովագրական ծախսեր 130.000 դրամի` KIA ծառայողական մեքենայի համար 55.000 դրամ, Մերսեդես- Բենց E-300 մեքենայի համար 52.000 դրամ, Արևաշատ բնակավայրի VAZ 2114 մեքենայի տեխզնման և ապսպայի համար 23.000 դրամ:

Համայնքապետարանի համայնքային ծառայողների վերապատրասման համար վճարվել է ներքին գործուղման ծախս 410.500 դրամ:

Կատարվել է արտաքին գործուղման ծախսեր հոգվածով 3 մլն 171.840 դրամի համայնքի ղեկավարի և տեղակալների Ֆրանսիայի Լեոն քաղաքում հայ-ֆրանսիական համագործակցության 4-րդ համաժողովին մասնակցության համար:

Կատարվել է վարչական ծառայություններ հոգվածով 99.360 հազ դրամի պաստառների, փաստաթղթերի սքանավորման և ամփոփաթերթերի տպագրության համար: Համակարգչային ծառայություններ հոգվածով կատարվել է ծախս 1 մլն 482.400 հազ դրամի, որից` 446.4 հազ դրամ հողի հարկի և գույքահարկի ավտոմատացված բազայի և 24.000 դրամ աղբահանության վճարների ավտոմատացված բազայի համար Վեկտր Պյուս ՍՊԸ-ին , 812.000 հազ դրամ ՏՀԶՎԿ ՀԿ-ին և ՀԾ Հաշվապահ-7 ծրագրի համար 200.000 դրամ:

Աութսորս ՍՊԸ-ին է փոխանցվել աշխատակազմի գնումների 2-րդ փուլին մասնակցության համար դասընթացի արժեք 70.000 դրամ:

Վճարվել է Հայրենական թերթերի բաժանորդագրության համար 288.000 դրամ:

Կենցաղային և հանրային սնունդի ծառայություններ և նյութեր, ներկայացուցչական ծախսեր

և ընդհանուր բնույթի այլ ծառայություններ հոգվածներով կատարվել է ծախսեր 10 մլն 647.970 դրամի.

որից` համայնքի 9 բնակավայրերի թվով 11 ավարտական դասարանների աշակերտների վերջին զանգի խնջույքի կազմակերպման համար յուրաքանչյուր դասարանին 100.000-

ական դրամ ընդհանուր թվով 1 մլն 100.000 դրամ, վարդերի ձեռք բերման համար 160.000 դրամ: Նախորդ ավագանիներին հրաժեշտի կազմակերպման համար նվերներ 10 հատ 94.040 դրամի: Գործող ավագանիների համար նվեր քարտեր ամանորի կապակցությամբ 901.400 դրամի: Կանանց միջազգային օրվա առիթով ձեռք է բերվել տոբլեր, շոկոլադներ և վարդեր 1 մլն 93.090 դրամի՝ բաժանվել համայնքի վարչական շրջանների համայնքապետարանների, մանկապարտեզների, մշակույթի տների, արվեստի դպրոցի, բուժամբույլատորիաների, հանրակրթական դպրոցների կին աշխատակիցներին:

Փարաքար համայնքի մանկապարտեզներում միջոցառումների կազմակերպման համար կատարվել է ծախս 2մլն 926.758 դրամի, որից՝ ձեռք են բերվել մանկական գրեքեր 45.950 դրամ, ավարտական խմբերի համար կազմակերպվել է միջոցառում „ՄԻՄԲԱ,, մանկական սրճարանում 760.500 դրամի, ամանորյա միջոցառում կազմակերպելու համար համայնքի 7 մանկապարտեզների և 4 նախակրթարանների թվով 790 երեխաների համար ձեռք է բերվել նվերներ-տոպրակներ 2մլն 120.309 դրամի:

Հունիսի 1-ին երեխաների պաշտպանության օրվան նվիրված ձեռք է բերվել թվով 1176 հատ թզուկ պաղպաղակ 81.144 դրամի, մուլտիերոսների և խաղավարների ծառայություն 470.000 դրամ: Կազմակերպվել է մանկավարժների օրվան նվիրված ուղևորություն գիղի ուղեկցությամբ դեպի Գյումրի, Դիլիջան և Լոռի ուղղություններով 2 մլն 131.000 դրամի:

Կազմակերպվել է բժիշկների օրվան նվիրված ուղևորություն գիղի ուղեկցությամբ դեպի Գյումրի, Դիլիջան ուղղություններով 310.000 դրամի:

Կազմակերպվել է տեղեկատվական կենտրոնում սովորող աշակերտներին ուղևորություն դեպի Ստեփանավան 70.000 դրամ:

Նորակերտ բնակավայրի ուսուցիչների այցը եռաբլուր, Փարաքար համայնքի երիտասարդական թևի այց Կարմիր Բլուր կազմակերպելու համար տրասպորտի վճար 40.000 դրամ:

Ֆուտբոլի թիմին տրանսպորտային միջոցով ապահովման համար 260.000 դրամ Ազգային փոքրամասնության օրվա կապակցությամբ միջոցառման կազմակերպմանը հնդիկների մասնակցությունը ապահովելու համար տրասպորտի վճար 30.000 դրամ:

Արհեստներ և Արվեստներ խորագրով փառատոնի Դիլիջան քաղաքում կայացած միջոցառմանը՝ Փարաքար համայնքի արվեստի դպրոցի շնորհալի սաների, համայնքապետարանի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի աշխատակիցների և համայնքի վարչական անձնակազմի՝ մասնակցելու համար - 185. 700 դրամ:

Ֆրանսիայից ժամանած հյուրերի համար կազմակերպել է ճաշկերույթ - 135.080 դրամ
Ե ճաշկերույթ - 130.350 դրամ

Լանչի կազմակերպում - 50.800 դրամ

Հակոբյաններ համահայկական կենտրոն հիմնադրամին Փարաքարի համայնքապետարանի կողմից նվեր 58.500 դրամ:

Նոյեմբերի 10-ին ՏԻՄ-երի ձևավորման օրվա առթիվ ձեռք է բերվել պատվոգրեր 116.250 դրամի:

Ձեռք է բերվել գրադարանավարի օրվան նվիրված ծագիկներ 38.000 դրամի:

Մինչև համայնքների խոշորացումը վճարվել է անասնաբուժի աշխատավարձ Այգեկ գյուղի մասով 136.968 դրամ, Մուսալեռ գյուղի մասով 71.000 դրամ, ընդհանուր բնույթի այլ ծառայություններ հոդվածով ծախս 57.886 դրամ:

Մասնագիտական ծառայություններ հոդվածով կատարվել է ծախս 3 մլն 617.130 դրամի որից

Արևաշատ գյուղում մանկապարտեզի գազատարի կառուցման շինհավաքագրման աշխատանքների համար վճարվել է 997.880 դրամ, 6.000 դրամ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման համար:

Մուսալեռի Շառլ Տիրան Թեքեյան 17 տան գազաֆիկացման ներտնային շինմոնտաժային աշխատանքների համար Գազպրոմ Արմենիա ՓԲԸ-ին է վճարվել 325.178 դրամ:

Մերձավան բնակավայրում անշարժ գույքի գնահատման համար փոխանցվել է 120.000 դրամ, չափագրման համար 508.125 դրամ:

Ձեռք է բերվել կլոր կնիքներ 120.000 դրամ /11 հատ և 1 դրոշմակնիք, 2 հատ ԱՄԾ- համար/: Փոխանցվել է Փարաքար կայքի դոմեյնի երկարաձգման համար 17.000 դրամ: համայնքապետարանի առաջին հարկի սրահի ապակիների մգեցման համար փոխանցվել է 80.000 դրամ: Վճարվել է գնումների համակարգողի ծառայությունների համար 980.000 դրամ:

Փոխանցվել է համայնքի կողմից սպասարկվող թվով 8 բաժանորդի գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման համար 190.948 դրամ:

Փոխանցվել է հակակարկտակայան կայանի ընթացիկ վերանորոգման համար 50.000 դրամ, տեխնիկական անվտանգության վկայագրի փորձաքննության համար 200.000 դրամ

Փոխանցվել է 155LL 70, 867LL70,444UO03, 270LL70 պետհամարանիշների մեքենաների տեխ գնում 22.000 դրամ:

Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում հոդվածով կատարվել է ծախս 570.000 դրամ, Էքսկավատորի ծառայություններ Պտղունք, Բաղրամյան Մերձավան և Փարաքար գյուղերում փողոցների հարթեցման համար:

Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում հոդվածով կատարվել է ծախս 1 մլն 801.740 դրամ, որից համայնքապետարանի քարթրիչների լիցքավորման համար կատարվել է ծախս 435.700 դրամի, ԿԻԱ ծառայողական մեքենայի դիմապակու փոխարինման և վերանորոգման համար ծախս 530.000 դրամի, Մերսեդես Բենց 300 ծառայողական մեքենայի վերանորոգման համար ծախս 77.000 դրամի, Վազ 21144 ծառայողական մեքենայի վերանորոգման համար ծախս 100.000 դրամի, DODGE CALIBER ծառայողական մեքենայի վերանորոգման համար ծախս 85.000 դրամ, Այգեկ և

Մերձավան բնակավայրերի տեսախցիկների ընթացիկ նորոգման համար 29.040 դրամ, Արևաշատի համայնքապետարանի բաքսիի վերանորոգման համար 15.000 դրամ, Մուսալեռ գյուղում խորքային հորի պոմպի վերանորոգման համար 180.000 դրամ, Թաիրովի մանկապարտեզի գազի կաթսայի վերանորոգում 45.000 դրամ ձեռք է բերվել մայր պլատա 35.000 դրամ: Կատարվել է ծախս 270.000 դրամի բիոլճակի պոմպի վերանորոգման և գեներատորի սպասարկման համար:

Գրասենյակային նյութեր և հագուստ հոդվածով կատարվել է ծախս 2 մլն 620.450 դրամի, որից՝ գրասենյակային պիտույքներ համայնքապետարանի և վարչական շրջանների աշխատակիցների աշխատանքը ապահովելու համար 1 մլն 273.370 դրամ: Ձեռք է բերվել համայնքում մահացած անձանց հոգեհանգստի արարողությանը համայնքի կողմից, որպես հարգանքի տուրք, ծաղկեպսակներ 1 մլն 143.000 դրամի: Սպորտ դպրոցի սաների համար ձեռք է բերվել 65 հատ պատվոգիր 14.000 դրամի, մարզային ֆուտբոլի առաջնությանը մասնակցելու համար 11 հատ շորտ և շապիկ 190.080 դրամի:

Տրանսպորտային նյութեր հոդվածով կատարվել է ծախս 5մլն 314.890 դրամի, որից՝ ծառայողական մեքենաների համար բենզին 2մլն 819.930 դրամի, բնական սեղմված գազ 572.630 դրամի, կարկտակայանի համար ժիտկատ 134.500 դրամ, բիոլճակի պոմպի համար դիզ վառելիք 101.500 դրամ, 223.330 դրամի տրանսպորտային նյութեր: Մերսեդես E 300 ծառայողական մեքենայի պահեստամասերի և վերանորոգման ծախս 122.000 դրամի, KIA ծառայողական մեքենայի համար ավտոպահեստամասեր և մարտկոց 495.000 դրամի, 152.000 դրամի անվադողեր և փոխանցման տուփի յուղ 86.500 դրամի, DODGE CALIBER 2.0 ծառայողական մեքենայի համար ավտոպահեստամասեր 438.000 դրամի դրամ, VAZ 21144 ծառայողական մեքենայի համար ավտոպահեստամասեր 84.500 դրամ, VAZ 21114 ծառայողական մեքենայի համար անվադող 4հատ 85.000 դրամ:

Կենցաղային և հանրային սնունդի նյութեր հոդվածով կատարվել է ծախս 471.090 դրամի, որից՝ համայնքապետարանի և վարչական շենքերի մաքրությունն ապահովելու համար ձեռք է բերվել կենցաղային մաքրիչ նյութեր 409.190 դրամի և սպասք 61.900 դրամ:

Հատուկ նպատակային այլ նյութեր հոդվածով կատարվել է ծախս 25 մլն 910.556 դրամի, որից բիոլճակի պոմպի ձեռք բերման համար 81.600 դրամ, Մուսալեռի ոռոգման ցանցի կառուցման համար բետոնե կիսախողովակ 965.888 դրամ, Փարաքար և Այգեկ գյուղերի ոռոգման առուների համար խողովակներ 210.8 մետր- 7 մլն 966.400 դրամի, Մերձավան գյուղի ոռոգման առուների համար երկաթե խողովակների ձեռք բերում 145.000 դրամ, պոլիէթիլենային խողովակի ձեռք բերում ոռոգման առուների համար 821.282 դրամի, Փարաքարի համայնքապետարանի տանիքի վերանորոգման համար պտուտակներ և արքեսուարներ- 233.626 դրամ, տախտակների և անկյունակների համար - 231.854 դրամ, Մերձավան գյուղի Երիտասարդության փողոցի համար բազալտե խիճ 990.000 դրամի, Փարաքար գյուղի Արարատյան փողոցի համար 25 հատ դիտահորի ձեռք բերում 2 մլն դրամի, ձեռք է բերվել ԼԵՂ լուսատու լամպեր 504 հատ 2 մլն 160.200 դրամի, ծառերի

համար բուժանյութեր 92.000 դրամի, խոտհնձիչի շարժիչի մասեր - 15.200 դրամի, 1,5-3 դույմ 1200մ պլաստմասե խողովակի ձեռք բերում 690.000 դրամի և 1000մ այլումինե հոսանքի լարի ձեռք բերում 77.000 դրամի, ռետինե սպունգային խցանիչ 27մ -39.690 դրամի, փոխանցվել է Էկոմիքս ՍՊԸ-ին, Մաքս Շին ՍՊԸ-ին և Լուիզա Մկրտչյան ԱԶ-ին հատուկ նպատակային նյութերի արժեք 7 մլն 489.170 դրամ : Համայնքապետարանի 2-րդ հարկի վերանորոգման համար ձեռք է բերվել շինարարական նյութեր 1 մլն 431.000 դրամի և մաքրության պահպանման համար տնտեսական նյութեր 425.200 դրամի, Էլեկտրական արետուարներ 55.450 դրամ,

Սուբսիդիաներ ոչ ֆինանսական համայնքային կազմակերպություններին հողվածով կատարվել է ծախս 327 մլն 866.925 դրամի, որից

Փարաքարի նախադպրոցական կրթությանը- 70 մլն 772.000 դրամ,

Այգեկի մանկապարտեզին - 25 մլն դրամ

Բաղրամյանի մանկապարտեզին - 13 մլն 831.000 դրամ

Մերձավանի մանկապարտեզ - 38 մլն 500.000 դրամ

Մերձավանի մշակույթ և սպորտ - 11 մլն 500.000 դրամ

Մուսալեռի մանկապարտեզ - 19 մլն 796.000 դրամ

Նորակերտի մանկապարտեզ - 34 մլն 315.187 դրամ

Պողոսյանի մանկապարտեզ - 19 մլն 729.988 դրամ

Փարաքարի արվեստի դպրոց - 46 մլն 477.750 դրամ,

Փարաքարի մարզադպրոցին - 1 մլն 200.000 դրամ

Փարաքարի մշակույթ և սպորտ - 41 մլն 715.000 դրամ,

Այգեկի մշակույթ և սպորտ - 5 մլն 030.000 դրամ

Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին հողվածով կատարվել է ծախս 5 մլն 102.100 դրամի, որից Փարաքարի արվեստի դպրոցին - 5 մլն 011.300 դրամ, և 90.800 դրամ Փարաքարի բուժամբույլատորիային շտապ օգնության մեքենայի վարորդի աշխատավարձ:

Այլ կապիտալ դրամաշնորհներ հողվածով կատարվել է ծախս 25 մլն 853.850 դրամի, որից Փարաքարի մարզադպրոցի կառուցման ՀՏԶ ծրագրի համաֆինանսավորման 5 տոկոսը՝ 16 մլն 853.850 դրամ և Նորակերտի դպրոցի մարզադահլիճի կապիտալ վերանորոգման համար դրամաշնորհ 9 մլն դրամ:

Այլ նպաստներ բյուջեից հողվածով կատարվել է ծախս 11 մլն 836.400 դրամի, որից վճարվել է հարազատին կորցրած թվով 80 ընտանիքի յուրաքանչյուրին 40 հազարական դրամ սոց օգնություն ընդամենը 3 մլն 390.000 դրամի, վճարվել է համայնքում անապահով ընտանիքներին ֆինանսական օգնություն 6 մլն 249.000 դրամ, վճարվել է Շողիկ Դազարյանի, Գյուլբաղին Մուլթանյանի և Սայադ Գրիգորյանի հուղարկավորությունը կազմակերպելու համար ծախս 550.000 դրամ: Մուսալեռ գյուղի ուսանողուհի Մարիետա

Թովմասյանին ուսման վարձ 100.000 դրամ, ըմբշամարտի Եվրոպայի առաջնության մասնակցության համար ֆինանսական աջակցություն Տիգրան Ըխտոյանին 100.000 դրամ, 26.11.2022 թվականի թիվ 100-Ա ավագանու որոշման համաձայն փոխանցվել է ֆինանսական օգնություն Ֆերիկ համայնքին 200.000 դրամ և ավտոդպրոց սովորող թվով 6 պատանիների ճանապարհածախս 197.400 դրամ: Վճարվել է աղբբեջանական ագրեսիայի հետևանքով 7 վիրավոր և 1 գոհվածի ընտանիքների դրամական աջակցություն 150 հազարական դրամ ընդամենը 1 մլն 050.000 դրամ:

Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին հոդվածով կատարվել է ծախս 3 մլն 542.800 դրամի, որից՝ համայնքների միությանը անդամավճար 278.300 դրամ, ՀՖՖ պատանեկան առաջնությանը Մուսալեռ Մ12 և Մ14 թիմերի մասնակցության ծախսեր 342.500 դրամ, Փարաքար համայնքի 9 գյուղերի լավագույն աշակերտների շրջագայություն դեպի Դուբայ 2544.000 դրամի, տարեվերջյան միջոցառման մասնակցություն /120 անձ/ 378.000 դրամ:

Պարտադիր վճարներ հոդվածով կատարվել է ծախս 968.759 դրամի, որից՝ Փարաքար խոշորացված համայնքի կադաստրային քարտեզ համար 300.000 դրամ, 420.000 դրամ փոխանցվել է ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե թվով 18 համայնքային հողամասերի պետական գրանցման վկայականի և միասնական տեղեկանքի արժեք, 140.000 դրամ փոխանցվել է ՀՀ պետբյուջե Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմ կառավարչական հիմնարկ պետական գրանցման, Նշան և Աիդա Կարայանների անվան Փարաքարի կրթական հիմնադրամ բացելու, Փարաքարի մարզադպրոց ՀՈԱԿ-ի պետական գրանցում ստանալու, Մերձավանի, Այգեկի մշակույթ ՀՈԱԿ-ների և Բաղրամյանի մշակույթ միացյալ տնօրինության լուծարման գործընթացի գրանցման վճար, 9.000 դրամ էլեկտրոնային ստորագրության նմուշի երկարացման համար, 47.000 դրամ պետական տուրք և 52.759 դրամ բնապահպանական վճար:

2022 թվականի ընթացքում Փարաքար համայնքի կողմից ներկայացվել է սուբվենցիոն 4 հայտ, որոնք բոլորն էլ հաստատվել են ՀՀ Կառավարության կողմից:

1. ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Բաղրամյան բնակավայրի Կոմիտաս փողոցի մի հատվածի, Ա.Իսահակյան փողոցի մի հատվածի, Այգեկ բնակավայրի 6-րդ փողոցի և Փարաքար բնակավայրի Արարատյան, Ֆրիկի, Ավետիք Իսահակյան, Եղիշե Չարենց փողոցների ասֆալտապատում
2. ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար և Բաղրամյան բնակավայրերի փողոցների տուֆով սալարկում
3. ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Բաղրամյան, Այգեկ, Նորակերտ, Արևաշատ, Մուսալեռ, Մերձավան, Պտղունք, Փարաքար բնակավայրերում խաղահրապարակների կառուցում և գոյություն ունեցող խաղահրապարակների վերանորոգում և վերագինում
4. Փարաքար համայնքի Բաղրամյան բնակավայրի Այգեգործների փողոցի, Թումանյան փողոցի, Շիրազի փողոցի, Պտղունք բնակավայրի Ագաթանգեղոս փողոցի, Մուսալեռ

բնակավայրի Տիգրան Մեծ փողոցի, Մերձավան բնակավայրի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ փողոցների և Այգեկ բնակավայրի 2-րդ և 3-րդ փողոցների, Փարաքար բնակավայրի Արցախի թաղամասի և Մհեր Մկրտչյան փողոցի գազաֆիկացում:

Ֆոնդային բյուջեի կապիտալ ծախսեր է կատարվել ընդամենը 776 մլն 567.734 դրամ, որից՝ պետության կողմից կապիտալ սուբվենցիա - 235 մլն 891.473 դրամ, Շենքերի և շինությունների կառուցում, վերանորոգում և նախագծանախահաշվային աշխատանքների գծով ծախսեր է կատարվել 773 մլն 887.872 դրամի՝ որից

Փարաքար, Բաղրամյան, Այգեկ բնակավայրերում ասֆալտապատում և 232 մլն 070.000 դրամի՝

Նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության համար՝ 210 000 դրամ: Փարաքար բնակավայրի Ա.Իսահակյան, Ֆրիկ, Հուշարձանի, Չարենց փողոցի ասֆալտապատման աշխատանքների համար 80 մլն 600 000 դրամ: Նախագծման համար՝ 988.000 դրամ: Այգեկ բնակավայրի Երևանյան փողոցի ասֆալտապատման համար 109 մլն 770.000 դրամ նախագծման համար՝ 1 մլն 144.000 դրամ:

Բաղրամյան բնակավայրի Ա.Իսահակյան և Կոմիտասի փողոցի ասֆալտապատման համար 41 մլն 700.000 դրամ նախագծման համար՝ 468.000 դրամ:

